ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

««Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» (փաստաթղթային կոդ՝ Կ-10-31.05.2017-ՊԻՄԻ-011/0) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների վերաբերյալ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրայր Թովմասյան	Նախագծերի փաթեթ	Նախագծերի փաթեթը համապատասխանեցնել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 95-րդ հոդվածի 1-ին մասին, 2-րդ մասի «ա» կետին և 3-րդ մասին, ըստ որոնց՝ նաև հարկադիր կատարողի վարչարարության հետեւանքով անձանց պատճառված վնասի համար պատասխանատվությունը կրում է Հայաստանի Հանրապետությունը, իսկ վնասի հատուցումը կատարվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին:	Ընդունվել է: Նախագծում «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի» բառերը փոխարինվել են «Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի» բառերով:	Ընդունվել է: Կհստակեցվեն «արտաբյուջե», «պահուստային ֆոնդ» եզրույթները:
2.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Արփինե	Հոդված 1	«7. Կատարողական գործողությունների կատարման ծախսերը փոխանցվում են դատական	Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածը խմբագրվել է:	Ընդունվել է:

	Հովհաննիսյան, Ռուստամ Մախմուդյան		ակտերի հարկադիր կատարման ծառայության նյութական խրախուսման եւ համակարգի զարգացման ֆոնդ, որում գոյացած միջոցներն օգտագործվում են կատարողական ծախսերի, հարկադիր կատարողի վարչարարության հետեւանքով պատճառված վնասի փոխհատուցման, համակարգի զարգացման եւ ծառայողների նյութական խրախուսման, ինչպես նաեւ սույն մասի 3-րդ պարբերությունում նշված դեպքում հարկադիր կատարողի վարչարարության հետեւանքով պատճառված վնասի հատուցմանն ուղղված Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների վերականգնման համար, <u>ինչպես նաև ապահովելու համար ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով կայացված վարչական և դատական ակտերով սահմանված ֆիզիկական և իրավաբանական անձանց վճարումները:</u>		
3.	ՀՀ Ազգային ժողովի	Հոդված 2	Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին հարկադիր կատարողի	Ընդունվել է: Նախագծի 2-րդ հոդվածը խմբագրվել է և	Ընդունվել է («դատական» բառը

	պատգամավորներ Արփինե Հովհաննիսյան, Ռուստամ Մախմուդյան		վարչարարության հետևանքով պատճառված վնասը հատուցելու մասին այն բոլոր դատական ակտերը, որոնք օրինական ուժի մեջ են մտել 2014թ. հունիսի 1-ից ենթակա են կատարման դատական ակտերի հարկադիր կատար-ման ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի հաշվին: ~~Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին առկա հարկադիր կատարողի վարչարարության հետեւանքով պատճառված վնասը հատուցելու մասին օրինական ուժ ստացած դատական ակտերը ենթակա են կատարման դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության նյութական խրախուսման եւ համակարգի զարգացման ֆոնդի հաշվին:~~	շարադրվել հետևյալ խմբագրությամբ «. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին հարկադիր կատարողի վարչարարության հետևանքով պատճառված վնասը հատուցելու մասին այն բոլոր ակտերը, որոնք օրինական ուժի մեջ են մտել 2014 թվականի հունիսի 1-ից հետո, ենթակա են կատարման դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի հաշվին»:	հանած):